

## Մամլոյ Հաղորդագրութիւն

### Հաղորդագրութիւն նեխած պատուաստներով սպաննուած երեխաներուն ոճրագործութեան վերաբերեալ

Ժողովրդավարական Փոփոխութեան Ուժերու Ազգային Համակարգող Մարմինը կը յայտնէ ուժգին դատապարտութիւնը հրէշային ոճրագործութեան, որ կատաուեցաւ Իտլիպի գիւղական շրջաններուն մէջ, որուն գոհ գացին աւելի քան քսան Սուրիացի երեխաներ նեխած պատուաստներով ներարկուելուն հետեւանքով: Համակարգող Մարմինը կը բեռցնէ այս ոճրագործութեան պատասխանատուութիւնը կոչուած Համաձայնական Մարմնի ժամանակաւոր կառավարութեան, և կոչ կ'ուղղէ միջազգային բոլոր կազմակերպութիւններուն, մասնաւորապէս Համաշխարհային Առողջապահութեան կազմակերպութեան և ԵՈՒՆԻՍԵՖ-ին, որպէսզի գործադրեն պաշտօնական հետազօտութիւն այս ոճրագործութեան շուրջ և հաշուի կանչել պատասխանատուները:

Ողորմութիւն Սուրիոյ նահատակ երեխաներուն:

18/9/2014

Ազգային Համակարգող Մարմին - Տեղեկատուութեան գրասենեակ